

Աստ, աստ արգել, դըշխոյ Մայր, ըզծով ցաւոցդ անձըրար,
Աստ աչք սիրոյդ, հաւատոց յառեցին պիշ՝ ուստի քեզ
Խաղաղութեան մըխիթար հասցէ ի սիւք հեղաշունչ:
Աստ՝ ուր տընկեալ քեզ Եդեմ, և ձիթենիք վայելուչ
Ի գնացս ամբիծ վըտակաց անէն զաճումն Աստուծոյ:

Կըրկին դարուց և կիսոյ այսօր լընուն ամանակը
Յոր լուսարփին Մխիթար ձօնեցաւ քեզ, Հայաստան:
Եւ բոլորին դարք կըրկին քեզ արդ ի պսակ նախընծայ,
Մատաղերամ մանկըտուոյդ տան, տաճարին կուսական,
Զոր կերտեցեր սուրբ ըըրտամբ, ո՛վ Հայր Ռիստիս և պարծանք:

Օ՛չ թէ ոգիդ վըշտակիր՝ յերանութեանց արդ ծոցոյ,
Երէնցի յորդուց սիրտս անդրէն՝ ի սէր, ի քիրտն, ի վաստակ:
Եւ կայտոնեցէ յալեաց գիրկս Ընծայարան նոր՝ հողացոս
Ուր փուսական ընդ թևովք ի շուշանաց բուրաստան
Աճէ մանկտին ի սէր Տեառն, Հայաստան քեզ ի մխիթար:

Հ. ԵՂՈՒ ՓԵՏԻՍԵԱՆ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Տէր Ներսէս Արքեպիսկոպոս Մելիք-Թան-
գեան, գրեց Հայկ Աճէմեան. տպ. Վէնե-
տիկ 1926:

Գովեստի տողերով յօրինուած 51 էջերով կեն-
սագրութիւնս իւր հանդիսական երեսյթին հա-
մար արժանի է հասարակաց ուշադրութեան:
Մեզ ծանօթ էր Սրբ. Մելիք-Թանգեանը իր
«Հայոց եկեղեցական իրաւունքը» լուրջ աշխա-
տութեամբ. և ահա Պ. Հայկ Աճէմեան և Արքապ-
տականի ամբողջ համայնքը, առիթ առնելով
Սրբազանին քառասնամեայ «Ազգային և
հասարակական գործունէութեան» Յօրելեանը
(1886-1926) կու գան արժանաւոր տողերով ազ-
գին ծանօթացնել տնոր գործնական կեանքն ալ:

Զաւակ Զանգեզուրի Մելիքական ազնիւ տոհ-
մի, օժտուած հայրենի լեռներու պարզ և կորովի
շնչէն՝ կը ներկայանայ Սրբ. Յօրելեանը անխոնջ
աշխատողի իսկական տիպարներէն մին: Հմտա-
ցած բարձր զարգացմամբ Պետրպուրկի համալ-
սարանի իրաւաբանական ճիւղին մէջ, իր ար-
գաւանդ մտքին մէջ ստացած սերմերը, հարիւ-
րապատիկ կը պողպեթէ, տալով երկու հատոր

իրաւաբանական ստուար երկերը, որոնք մինչև
այսօր ալ գրեթէ առաջիններէն են իրենց տե-
սակի բարձրութեան մէջ:

Նուիրուած է սիրայօժար Խրիմեանի օրերով,
և ուսուցչական փշոտ ասպարիզին մէջ յաջող ել-
քով: Ունէն էլեւմտական հանճար՝ կարգաւորելու
Էջմիածնի կալուածները երկար տարիներ: Մտած
է 1905ի կովկասի ազգապաշտպան կոնսուլու
մէջ զինուորի պէս, խրախուսելով զինուորն ու
շարդուած գեղջուկը:

Սակայն ծերունի Սրբազանը Արքապատականի
մէջն է որ Առաջնորդի ծանր պաշտօնով կը
վայելէ բարձր շրջանակներու առանձին համա-
կրանքը և իր հօտին անսահման սէրը: Չնայելով
իր յառաջացած տարիքին՝ հօր պէս խնամած է
թէ՛ վանի և թէ՛ կովկասի փախստականները,
այսպէս արժանանալով պարսկական բարձր պա-
տանշաններու: Մենք ես միացնելով մեր շերճ
ուրախակցութիւնները իւր ժողովուրդի անկեղծ
արտայայտութեանց՝ կը մաղթենք դեռ երկար
և երջանիկ տարիներ:

ՃՐԱՆՍԱՐԱՅ ՏԱՐԵԳԻՐԸ

Բարիք՝ որ Եւրոպայի սիրտը համարուած է,
մեզ համար ալ էական կեդրոն մ'է, հոն ամփոփ-
ուած ըլլալով մեր լաւագոյն և աշքառու դէմ-

քերքը: Անժխտելի էր այն անհրաժեշտ հարկը՝ որ այդ հայ գաղթականութեան սիրտն ունենար իր կենսութեան համար չափանիշը, տալով ամփոփ տեղեկութիւն մը իր տարեկան գործունէութեան: Ահա Ֆրանսահայ-Տարեգրքը, Պ. Հ. Տէր Ներսէսեանի գովելի նախաձեռնութեամբ ասպարէզ կ'ելլէ այդ նուիրական պաշտօնով:

Այսպէս գրական և գեղարուեստական հարսցերով զբաղել կը շնանայ, որքան գործնական կենսութիւն, գաղթական հայուն՝ օրուան հացի վաստակով:

Առատ է ասկէ անկէ քանի մը տող ծանօթութիւններով, վաճառականներու, արհեստաւորներու, արուեստաւորներու, գեղարուեստի սիրահարներու, հայագէտ ֆրանսացիներու, և ուրիշ շատ մը տեղեկութեամբ. ամենահամեստ վիճակի հայնէն ամենէն աչքառուն՝ հոն անխտիր տեղ մը գրաւած է, ինչպէս դաշտ մը՝ ուր զանազան ծաղիկներ ցրուած կը փայլին իրենց առանձնայաւունքով գեղեցկութեամբ: Մասնաւոր յիշատակութիւններ ունի գաղութային անթիւ կազմակերպութեանց, հակառակ որ զմեզ անմիաբան կը կարծեն՝ ահա մեր միաբանասիրութեան յայտնի ապացոյց:

Գրական գրեթէ ոչինչ ունի. թերեւ առաջին տարւին ըլլալուն համար է որ աւելի տեղեկաւ տուութեամբ կը զբաղի: Մասնաւոր կարեւորութիւն ունի ֆրանսահայ գաղութին համար հիւրընկալ կատարութեան ընտանեկան օրէնքներուն զետեղումը, ժողովուրդը իր պարունակին գիտակից ընելու համար:

Տարեգրքը կը վերջանայ 232 էջով: Տպագրութիւնը և թուրքը շատ միջակ են:

Տք. Ա. Բարսեղեանի տուած տեղեկութիւնները՝ զանազան փոքրիկ գաղութներու վրայ թանկագին յիշատակ մը պիտի մնայ մեր գաղթականական պատմութեան, երանք թէ կրիւկան գաղութներն ալ ժամանակին դրած ըլլային իրենց խառն կամ Ֆրանսա հաստատուելու պատմութիւնը:

Կարեւոր ձեռնարկ մ'է նաև ֆրանսական գաղութին անհատներուն անուանց և բնակութեանց աշխատանքային ցանկը, որ ևս աւելի ճշխանաւուն յոյս ունի:

Ապահով ենք որ Պ. Հ. Տէր Ներսէսեան «հապենպով և փոքրածաւալ» Տարեգրքը աւելի ճոխ և գեղեցիկ տպագրութեամբ ասպարէզ պիտի հանէ:

Եզրիպատմայ Տարեգրք

Հինէն ու նորէն քաղուած զանազան լուրջ և երկայն գրութիւններով կը ներկայանայ Պ. Հ. Աճէմեանի «Տարեգրքը»:

Եւալով նոյն որքան «Ֆրանսահայ Տարեգրքը» չունի անոր յարափոփոխ տեսարաններու շարքով և գուարժի ու թեթև նկարագիրը: Այսպէս ապահով ենք որ Եզրիպատմի հորիզոնին ու միօրինակ դաշտներուն վարժուող հայը, շատ հաճութիւն կը կարդայ քան ֆրանսական գաղութային նկարագրով հայը:

Տարեգրքը աւելի զինքը շրջապատող միջավայրի և հիւրընկալ երկրի հարցերով զբաղած է քան գաղութի կիսանքով: Պէտք է ըսել սակայն որ իւր յօդուածներն աւելի ընտիր են, թէպէտ ոչ շատ յարմար տարեգրքի մը: Այսպէս քաղաքական փաստաթղթերը, մեզ աւելի զայլոյթ կը պատճառեն իրենց կեղծ դիմակով՝ քան զբոսաշրջ, ինչպէս և Ֆրանսայի վատ ընթացքը կրիւկեան ճակատներուն վրայ:

Եզրիպատմայ լուրջ աշխատող և անաղմուկ վաճառական, շատ ուշիւ եղած է Պ. Հ. Աճէմեանի տարեգրքին նիւթ մատակարարելու. քանի մ'էջերու մէջ ամփոփուած է Եզրիպատմայութեան համայնապատկերը:

Ըստ իս շատ երկար են «Սոսիալ յրաճեցի» պատմութիւնը և Նափոլէոնեան դրուագները:

«Խառն դատարաններու պատմութիւնը» ալ թերթերու և այլ հանդէսներու մէջ բազմիցս յեղեղուած էր, որով ոչ իբր նորութիւն, այլ հայտնութեան պատուաբեր գործ՝ միշտ ախորժով ընթերցելի է:

Գրական բաժինը զիտելով՝ անաշտ քննադատի ոգւով մենք իբր գեղարուեստորէն յաշող գրութիւն գրեթէ ոչ ինչ կը գտնենք. Պ. Հ. Թէքէեան իսկ որ, փակագծի մէջ, եզրիպատմայ բանաստեղծներու «Լիտրն» է, իր «Սոսիալ»ով քանի մը բռնագործիկ տողեր չարած է, ինչպէս և Պ. Յ. Սէթեանը իւր «Խառն» և Հայ խորհրդը՝ ոտանաւորով շատ հին բանաստեղծութիւն է: «Տիգրան Ամիրճանեան»ի կենսագրութիւնը արդի գրականութեան համար թանկագին առաջը մը պիտի ծառայէ, և կրնար առանձին բաժնի մը ձևանալ այնքան երկարութեամբ:

«Քաղաքական նշմարներ»ու մէջ նուիրուած են անկախ Հայաստանին հայրենաշունչ տողեր, քաղաքական կենսութիւն խորտաներ, որ միշտ օգտակար են անփորձ հայուն:

ինչպէս Պրանսահայ Տարեգիրքը, նոյնպէս և եգիպտահայ Տարեցոյցը շատ աղքատ են նկար- ներու կողմէ, որ կը ծառայեն իբրև հաճելի գրգռի մը՝ թերթատելու տարեցոյցները:

Յաջողութիւն և յարատեւութիւն կը մաղթենք աւելի լայն և զեղեցիկ էջերու, խնդութեամբ ողջունելու համար Գ. հատորի արշալոյսը:

Հ. Ս. Խ. Հ. Պետական Համալսարանի Գիտական տեղեկագիր.

Զգիտեմ թէ որ հայը՝ ըլլայ արտասահմա- նեան և ըլլայ բնիկ, խանդակաթ սիրով պիտի չողջունէր Հայկական Համալսարանի Գիտական Տեղեկագրին անդրանիկ թիւը: Բաւական ըն- դարձակ հատոր մը 182 էջով:

Տասնընորս Ուսուցիչներ աշխատած են զանա- զան նիւթերէ վրայ՝ իրենց յատուկ մասնաճիւղերով, և հետեւաբար գործին գիտականօրէն բարձր աստիճան մը ներկայացնելու ամենալաւ ուժե- րով օժտուած:

Չնկատելով լեզուական տխուր հարցը՝ որ ցա- ւալի խրամ է զազութիւն ու Մայր Հայրենիքի մէջ բացուած, հակառակ Հայաստանի օգտին և հակառակ ժողովրդային խոշոր զանգուածի բաղ- ձաքին, մենք առջնիւս ունինք գործ մը՝ որ իր գիտական էութեամբ անաչառ քննելով՝ շատ մտաւորով գովելի և գնահատելի է:

Ընտելուր կերպով «Գիտական Տեղեկա- գիրը» կարող ենք երկու որոշ մասի բաժնել. Հայագիտական, Գիտական: Երկու մասով ալ բացարձակապէս նուիրուած Հայաստանի վերա- բերելով ուսումնասիրութեան նիւթերու:

Հայագիտական մասով կարելի է համարձակ ըսել, որ յարգ. յօդուածագիրները բաւական յաշոգ են նոր հարցեր ուսումնասիրելու մէջ, մասնաւորապէս զբաղուելով գործնական և դա- սակարգային խնդիրներով, որոնք գրեթէ ան- տեսուած էին ցարդ, բանասէրներէ և կամ մաս- նագէտներէ, կամ՝ լաւ ես՝ ոչ այնքան լուրջ և հիմնական նկատողութեան առնուած: Խօսքս աւելի Ուս. Յակովբ. Մանանդեանի յօդուածի մասին է, որ մեծագոյն կտորն է Տեղեկագրին: «Դիտողութիւններ հիւսն Հայաստանի շինա- կաններէ դրոշմաւ մասին Մարգարեանոսիան շրջանում»:

Իրաւ է, ինչպէս կը յիշէ յարգ. Մանանդեան, չէ եղած այս գրական տեսակետով լուրջ և հիմ- նական ուսումնասիրութիւններ, բացի քանի մը պարագայի բերմամբ հայեացքներէ: Սակայն

էական պատճառը պատմական որոշ տեսլանքու բացարձակ չգոյութիւնն է: Մենք չունինք ոչ Գուկիտիդէս մը, ոչ Յուլ. Կեսար մը և ոչ Տա- կիտոս մը, մասամբ բացառութիւն կազմելով Փաւստոս, որ իրապաշտ և շրջանակին մանրիկ բաներուն գիտակ ըլլան: Մեր պատմութեան մէջ ամենէն աւելի հարկաւոր և ամենէն աւելի անտեսուած իրը՝ պատմիչը շրջապատող ընտա- նեկան առարկան է, մէկ խօսքով՝ ներքին կենսի ուսումնասիրութիւնը:

Շատ կէտերու մէջ ընդգրկելով Պ. Մանան- դեանի կարծիքները Հայ շինականի դրութեան մասին, պէտք է ըսենք նաև որ շատ մասեր ալ զեռ վիճելի կը մնան, կամ բաւական լուսաբա- նուած, բայց ոչ հիմնապէս: Ինքն ևս զգացած է որ լոկ քանի մը «Ազատ, կամ անազատ» կամ «Ի հարկի ծառայութեան» կցկտուր բառերով կարելի չէ ընկերային մի չէնք չիմել:

Անցնինք Պ. Ա. Խաչատուրեանի գրութեան մի այլ շահեկան յօդուածին. «Քոյն պատմիչների Տեղեկութիւնները հիւսն Հայաստանի ոսկեհան- յերի մասին»:

Ընդհանրապէս շատ ցիւ ուսումնասիրուած են Հայաստանի հանգքերը, թէ՛ պատմականօրէն և թէ բնաբանօրէն, հակառակ իրենց առատու- թեան: Պ. Խաչատուրեան իր յօդուածին մէջ գլխաւորաբար կը ծանախայ Ստրաբոնի տե- ղեկութեան և մասնաւորապէս Պրոկոպիոսի յի- շած փառամեղիւն բերդի տեղւոյն ճշգրտան, ուր կար մեծ ոսկեհանք մը պարսից և Յունաց հայ- կական սահմաններուն վրայ և յաճախ ձեռքէ ձեռք յափշտակուած երկու ազգերէն:

Ինքն ևս Պ. Արոնցի և Հ. Ղ. Ինճիճեանի հակառակ մաքառելով հանդերձ, վերի անուան ծագման շուրջ չէ կրցած որոշ լուծում մը տալ, բայց մերձաւորապէս շանացիք է ճշգրտ անոր տեղը Թորթում գետի ափին, ձորոտի աւազա- նին մէջ, և ոչ թէ Ի Բասէն, ինչպէս կ'ըսէ Պ. Արոնց:

Պ. Բժ. Յովհաննէսեանի կատարած ուսում- նասիրութիւնը ոչ այնքան գրական նորութիւն մ'է ինքնաշխատանքի արդիւնք, որքան վերլու- ծական մի ամիոսիք Գր. Մագիստրոսի ընդ- հանուր նկարագրին և թղթերուն, մասնաւոր- րապէս բժշկական տեսակետով: Եւ իբրև այդ- չէնք կարող նոյն արժէքն ընծայել որպէս նա- խորդ երկու յօդուածներուն:

Ընդհակառակն Պ. Հ. Աճառեանի յօդուածը «Գնթորանների և Թուրքիների կրօնը» մի պատուական նորոյթ է կրօնապատմական տե-

սակետով. և կը կարծեմ թէ պատմականօրէն ուսումնասիրութեամբ կարելի պիտի ըլլայ աստիճան կամ որչի՜նք աղանդներու մէջ, որ «կարելի է 10 կամ 11 տեսակ, հաշուել», գտնել Արեւորդիսներու և կամ Թուրքականիցներու ժառանգներ, որ դարբերու ընթացքին եկեր են և այդ կերպ կրօնի են յանգեր: Խառնած քրիստոնէական հնդկական — մահմէտական կրօններն իրարու, ինչ պէտք ես անկիցեցուց մնացորդներ՝ թէ կ'ուզենք նաեւ ի խոշոր երթալ: Բնած սոյն կարծիք մ'է:

Գիտական բաժնի մէջ մասնաւորապէս կ'ուսումնասիրուին բժշկական կտորներ, յատկացուած և փորձուած հայկական հիւանդանոցներուն մէջ, որով աւելի մասնական շահեկանութիւն մը զգեցած մեզ համար: Այսպէս Հ. Քեչէկ «Արմէնիկ անոդոքիլի յօդախախտման մասին» և Բժ. Գր. Արեւեան «Հայ կնոջ կոնքը և ծննդի տևողութիւնը»: Բժ. Արշ. Յակոբեան «Հիստերիկ Մոտուիզմի և պարալիզների երկու դեպքեր»: Բժ. Ե. Գալանթարեանի հետաքրքրական երկը «Հայաստանի ազգաբնակչութեան Հիշմանտոգրաւոյի ուսումնասիրութիւնը»:

Կան նաև շահեկան յօդուածներ Հայաստանի տնկազորութեան մասին, ինչպէս Պ. Քալանթարեանի «Բաւարական երկու ետրոքային շախմատի Հայաստանում»: Մ. Թումանեանի «Հաջորդի մակնդիկի մշակութեան հետաքրքրանքը Հայաստանում» և այլն:

Ընդհանուր առմամբ ոչ այնքան խոր ուսումնասիրութեան մը երևոյթը կու տան՝ որքան դպրոցական դաստիարակութեան, սակայն հարկ է ըսել որ ինքնաշխատութեան մեծ ճիգ մը կայ, ներքին կենսունակ ոչ մը Հայաստանի մէջ զարգացնելու տեղական ինքնուրոյն մի գիտական բարձր և նոր միջնորդութիւն: Զեմ ուզեր ծածկել և այն պակասը՝ որ կը տեսնուի գիտական բաժնին մէջ, որ է եւրոպական արդի յառաջադիմութեան, և նմանօրինակ պարբերականներու անհետօթութիւնը, որով և բազմակողմանի ուսումնասիրութեան էական մէկ տարր մը:

Բաւական յօդեցուցիչ է նաև Տեղեկագրին մէջ ընթերցումը, եւրոպական գիտական եզրեւորութիւն տարօրինակօրէն յաճախ կիրարկումը և հնչափոխութիւնը, ապահով եմ որ Հայաստանիցին՝ որուն համար նաշուշու գլխաւորապէս շաբադրուած են՝ բան չի հասկնար:

Յօդուածներուն վերջը եւրոպական մի ու է լեզուով կամ ամբողջական թարգմանութիւնը կայ, և կամ մի փոքրիկ ամփոփում էական մասին: Հասնելով «ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՆ» վերջը՝ մենք

ընդհանրապէս կը գնահատենք բոլոր աշխատութիւնը, սակայն ոչ յօդուածագիրներէն ոմանց արհամարհող պարծենկոտութեան չափ. և կը փափաքեմք նորանոք յաջողութիւններ, մասնաւոր վերջնելով լեզուի և այլ զաղափարներու ոչ ազգային խոշորագոյնները գիտական Հայաստանէն, ձեռք ձեռքի տուած բնիկ և տարագիր Հայ եղբայրներ միանալու սրբազան ազգութեան մէջ, որ մեր դարաւոր զաղափարն է:

Հ. Վ. ՅԱՆՆԻՍԻԱՆ

Զ Ա Ի Ե Շ Տ

ԱՊՈՒ ԳԱՍԵՄԻՆ ՀՈՂԱԹՈՓՆԵՐԸ

Ա Ն Ց Ի Ն Ք

ԱՊՈՒ ԳԱՍԵՄ, ազաւ և հարուստ պատուաւոր. ՄԱՀՏԻ ՍԻՒԼԷՑՄԱՆ, ազաւ և հարուստ անպառօն. ԱԼԻ ՄՈՒՍԹԱՌԱՅԻՆ, դաւաւ աւանդ. ՀԱՅՏԱՐ ԶԵՔԻ ԲԵԿ, փեսայ Ազու Գասեմի. ՍՍՄԱՆ, ծառայ Ազու Գասեմի, պատանեակ. ՔԵՄԱՆ, ծառայ Հայտար Զեքի, պատանի. ՀԻՍԵՆ և ՆՈՒՍՈՒՅԻ, դաւաւ շառաւիղներ. ՓԱՊՈՒՃՃԻ ՄՈՒՍԱ, կողակաւոր. ՀԱՋԻ ՌԻՍՏԵՄ. ՄՈՒՆԵՏԻԿ ՄԸ. ՔԱՆԻ ՄԸ ԻԱՆՈՒԹՊԱՆՆԵՐ. ՔԱՆԻ ՄԸ ԹՈՒՐԲ ԼԱՄՈՒԿՆԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԻ:

Գորոգողութիւնը կը կատարուի բարձր աւանի մը մէջ,

ՀԱՆԴԵՍ ԱՌԱՋԻՆ

Տեսարանը կը մերկայացնէ աւանի շուկայ մը, երկու կողմէն կարգ մը խանութներով, որոնց մէջ է նաև փապուճիկ Մուսայիմը, որ կ'աշխատի մորեղջիւր աշխարհի ու ծամը զոյգ մը հողաթափներ. Ժողովուրդը խանութներում առչէ կը շարժի ու վաճառք կը գնեն, Մուսայի խանութիմ առջեւ կայմած է Օսման.

Ա. Խանուրպան (բոլոր լաւագին մը). — Հեռացիր, մէկդի կորսուէ՛ր դատարկապարտ. ուրիշ անգամ ալ այդպէս որդորմուկ ձեռով մօտեցար խանութիս, տուիք մը լուցկի գնեցիր, բայց տուիք մը ծխախոտ ալ զողջար փախուցիր...